

ՎԻԵՏՆԱՄ

Օգոստոսի 5-16, 2019 թ.

Բաղրամյան 1 | amenoor@spinnaker.am | +37491323264



amenoor
adventures and expeditions with spinnaker group

Այցելության հիմնական վայրերը

■ Նավարկություն Հալոնգ ծովախորշով

Հալոնգը համարվում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ: «Հալոնգ» թարգմանաբար նշանակում է «վայր, որտեղ վիշապն իջել է ծովը»: Ըստ լեգենդի՝ Հալոնգ կղզին ստեղծվել է հսկա վիշապի կողմից: Տեղացիները մինչև այժմ էլ ասում են, որ ծովածոցում վիշապ է ապրում: Ծովախորշը ներառում է ավելի քան 3000 կղզի՝ մեկը մյուսից դրախտային լողափերով:

■ Ոսկե կամուրջ. Դանանգ

Այս կամուրջն արդեն հասցրել է գրավել միլիոնավոր զբոսաշրջիկների ուշադրությունը: 1414 մ. բարձրությամբ ու 150 մ. երկարությամբ այս յուրօրինակ կամուրջը բացվել է 2018թ-ի հունիսի վերջին: Կամուրջը պահում են երկու հսկայական ձեռքեր: Ոսկե կամրջից հիասքանչ տեսարան է բացվում Դանանգի Բա Նա Հիլզ լեռները:

■ Հո Հոան Կյեմ լիճ. Հանոյ

Հո Հոան Կյեմ լճին երբեմն անվանում են նաև «Վերադարձված թրի լիճ» կամ «Կանաչ ջրերի լիճ»: Լիճը գտնվում է մայրաքաղաք Հանոյի կենտրոնում ու համարվում է Վիետնամի կարևորագույն տեսարժան վայրերից: Ըստ ավանդության՝ այդ լճում ապրող կախարդական կրիան Լե Լոյ տիրակալին նվիրում է մի թուր, որով վերջինս հաղթում է չինական բանակին: Հաղթանակից հետո, Լե Լոյը թուրը վերադարձնում է լիճ՝ կրիային:



Բարի գալուստ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն:

Այստեղ յուրաքանչյուր զբոսաշրջիկ իրեն կգգա ապահով ու շրջապատված սիրով: Վիետնամցիները շատ լավ հասկանում են, որ իրենց բարեկեցությունը մեծապես կախված է զբոսաշրջիկներից, այդ իսկ պատճառով, անում են ամեն ինչ, որ զբոսաշրջիկն իրեն լավ գգա:

Վիետնամն անդադար ձգում է նոր զգացողությունների սիրահարներին: Այստեղ ամեն քայլափոխի կարելի է կանգ առնել ու զարմանալ:

Զբոսաշրջիկները գալիս են Վիետնամ վայելելու չքնաղ բնությունը, մաքուր օդն ու սպիտակ լողափերը, ու սրանք, ուղղակի, խոսքեր չեն:

Լինելով ագրարային երկիր՝ փոքրաթիվ գործարաններով, Վիետնամին հաջողվել է պահպանել բնությունն ու չաղտոտել շրջակա միջավայրը: Այստեղ գրեթե մեքենաներ չկան, իսկ բնակիչները երթևեկում են կամ հեծանիվներով, կամ՝ մոպեդներով:

Վիետնամը զբոսաշրջիկներին գրավում է նաև իր բյուջետային գներով, ուստի գնումներ անելիս, դուք հաճելիորեն կզարմանաք: Այնպես որ, եթե պատրաստ եք բացահայտել Վիետնամը, հավաքեք ճամպրուկները:

Ռայա Բականյան
Խմբի ղեկավար



Թռիչքի տվյալներ՝

05.08 / Երևան – Դոհա 03:00 – 04:55 / Դոհա – Հանոյ 20:25 - 07:25+1

16.08 / Հոշիմին – Դոհա 09:15 - 13:05 / Դոհա – Երևան 20:50 – 00:50+1

ՕՐ 1

Ժամանում մայրաքաղաք Հանոյ, շրջայց

Առավոտյան ժամանելով Վիետնամի մայրաքաղաք Հանոյ՝ մեզ կդիմավորեն ու կուղեկցեն հյուրանոց: Առջևում կունենանք մի ամբողջ օր տեսարժան վայրեր այցելելու համար: Նախ կայցելենք Հո Չի Մինի դամբարան, ապա Չան Կուոկի պագոդա (բուդդայական կամ հինդուիստական պաշտամունքային կառույց), Էթնոգրաֆիկ թանգարան, Գրականության տաճար, Հո Հոան Կյեմ լիճ: Ամբողջ ընթացքում ձեզ կներկայացնենք տվյալ վայրերի ուշագրավ պատմությունները: Երեկոյան ներկա կլինենք ջրի վրա տիկնիկային ներկայացման:

ՕՐ 2

Հանոյ-Հալոնգ

Առավոտյան 5* նավով կմեկնեք նավարկության Հալոնգ ծովախորշ: Նավում կանցկացնեք 3 օր և 2 գիշեր: Նավում ձեր ժամանակն ուղղակի կթռչի, այստեղ ձեր ժամանցը կազմակերպելու բազմաթիվ տարբերակներ Տիտովի լողափում կամ Բայ Թու Լոնգ Բեյում էլ մեզ սպասվում է կայակինգ:



ՕՐ 3

Այցելություն քարանձավներ

Նավարկության ընթացքում կկայանանք տարբեր լողափերում՝ այցելելով առեղծվածային քարանձավներ: Որոշ քարանձավներ կարելի է մուտք գործել հենց նավով: Վիետնամի ամենահայտնի ու գեղեցիկ քարանձավներ են Հիոնգ Տիչը, Բիչ Դոնգը և Թխեն Դիոնգը: Իսկ ահա Բիչ Դաո քարանձավում, ասում են, որ ժամանակն ավելի դանդաղ է հոսում, քան արտաքին աշխարհում: Քարանձավներում կարելի է հանդիպել յուրահատուկ էկոհամակարգի: Այնպես, որ այս ծրագիրը, միանշանակ, կգրավի ձեր ուշադրությունը:

ՕՐ 4

Հալոնգ - Հանոյ

Ավարտելով եռօրյա նավարկությունը՝ կվերադառնանք Հանոյ: Այսօր հնարավորություն կունենանք զբոսնելու մայրաքաղաքով, այցելելու Հո Հոան Կյեն լիճ, որին երբեմն անվանում են նաև «Վերադարձված թրի լիճ», ծանոթանալու դրա շուրջ հյուսված առասպելներին: Հենց այս լճի կենտրոնում է գտնվում «Կրիայի աշտարակը», որտեղ իբրև թե բնակվում է առասպելան կրիան: Այս լճի շրջակայքում է գտնվում նաև «36 փողոցների թաղամասը»: Շրջելով այս թաղամասով՝ դուք կգգաք հին թաղամասի շունչը: Ի դեպ, այստեղ կարելի է գնումներ անել, որովհետև ամեն քայլափոխի վաճառատեղաններ են: Իսկ ահա, երեկոյան ժամը 7-ից հետո այս թաղամասը վերածվում է մի մեծ սրճարանի, վաճառատեղանները վերափոխվում են կոկտեյլ բարերի ու սկսվում է տոնական երեկոն: Այնպես որ Հանոյում դուք հաստատ չեք ծանձրանա:





ՕՐ 5

Հանոյ - Դանանգ

Նախաճաշից հետո հարմարավետ ավտոբուսներով մեզ կտեղափոխեն օդանավակայան, որտեղից կթռչենք Դանանգ: Օդանավակայանում մեզ կդիմավորեն ու կուղեկցեն Դանանգում 5* հյուրանոց: Հանգստանալուց հետո կսկսենք բացահայտել Դանանգը: Լողափի սիրահարներին սպասում է Մայ Խե Բիչ սպիտակ լողափը, որը համարվում է զբոսաշրջիկների ամենասիրելի լողափը: Այստեղ կարող եք զբաղվել սնորքլինգով, դայվինգով, գնալ ձկնորսության կամ ուղղակի այցելել որևէ ռեստորան, որը մատուցում է թարմ ծովամթերք: Իսկ եթե քաղաքային ժամանցի սիրահար եք, ապա այցելեք 666 մ. երկարություն ունեցող «Վիշապի կամուրջ», որն ամենաերկարն է Վիետնամում: Այստեղից աննկարագրելի տեսարան է բացվում:

ՕՐ 6

Շրջայց Դանանգում

Այսօր մեր շրջայցը կսկսվի Բանա լեռան գագաթից: Կայցելենք «Բանա Հիլս» զվարճանքների զբոսայգի: Այստեղ տեղակայված է մոտ 90 խաղահրապարակ՝ տարբեր ատրակցիոններով: Ասում են՝ զբոսայգին կառուցվել է ժյուլ Վեռնի «Ճանապարհորդություն դեպի Երկրի կենտրոնը» և «20000 լյո ջրի տակ» վեպերի ազդեցության ներքո: Այնպես որ պատրաստվեք հեքիաթային զբոսանքի: Ատրակցիոններից հետո սպասվում է այցելություն դեպի մեր օրերի ամենայուրօրինակ կամուրջներից մեկը՝ «Ոսկե կամուրջ»: Այս կամուրջը, որը պահում են երկու հսկայական ձեռքեր, իսկապես հիասքանչ է: Հայտնվելով կամրջի վրա՝ ձեզ կթվա, որ երկնքում եք: Կամրջից բացվող տեսարանի մասին գրելն ավելորդ է, պետք է սեփական աչքերով տեսնել այն::

ՕՐ 7

Դանանգ - Հոյան

Այս օրը նախատեսված է այցելություն պատմական Հոյան քաղաք: Այն համարվում էր Հարավ-արևելյան Ասիայի կարևոր նավահանգիստների մեկը: Կայցելենք Ճապոնական ծածկված կամուրջ՝ Կոյ Նյատ Բան: Կամուրջը 1593թ.-ին կառուցել է Ճապոնական համայնքը: Կամուրջը երկար ժամանակ միմյանց էր կապում մյուս ափին գտնվող Ճապոնական թաղամասն ու շուկան: Ի դեպ, այս կամուրջը համարվում է ամենադիմացկուններից մեկը, այնպես որ հանգիստ կարող եք քայլել դրանով: Այնուհետև մեզ կուղեկցեն չինական ոճով կառուցված Ֆուջիան տաճար, որն ունի շատ ուշագրավ պատմություն: Զբաղենք փակագծերը. դրա մասին մեզ կպատմի տեղացի ուղեկցորդը: Նախատեսված է այցելություն նաև ձկնորսների գյուղ, որտեղ կծանոթանանք տեղացիների նիստուկացին: Օրվա երկրորդ կեսին կայցելենք Միշոն տաճարային համալիր: Միշոնը 70 հինդուիստական տաճարներից բաղկացած խոշոր համալիր է, որը ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Շրջայցից հետո կվերադառնանք հյուրանոց:

ՕՐ 8 - 9

2 ազատ օր Դանանգում

Եվս 2 ազատ օր Դանանգում: Եթե նախորդ օրերին հասցրել եք արդեն գնալ լողափ, ապա այս օրը կարող եք հատկացնել թանգարաններին և պատմամշակութային վայրերին: Օրինակ, կարող եք այցելել Զամ թանգարան ու ծանոթանալ համանուն ցեղախմբի մշակույթին ու պատմությանը: Արժե այցելել նաև Դանանգի Հինգերորդ ռազմական դիվիզիայի թանգարան, որտեղ կարելի է հանդիպել տանկերի, ռազմական օդանավերի, պատմական լուսանկարների: Մի խոսքով, Դանանգում դուք հաստատ չեք ձանձրանա:



ՕՐ 10

Դանանգ - Հոշիմին

Օդանավակայան տեղափոխվելուց հետո կմեկնեք Հոշիմին: Այն արագ զարգացող քաղաք է, այստեղ մեկը մյուսի հետևից կառուցվում են նոր երկնաքերեր և առևտրի կենտրոններ: Դուք ունեք մեկ ամբողջ օր քաղաքը ինքնուրույն բացահայտելու համար: Օրինակ, կարող եք գնալ գոլֆ ակումբ կամ ջիփփինգի: Հոշիմինն, իսկապես, ակտիվ, ժամանակակից քաղաք է:

ՕՐ 11

Հոշիմին – մեկնում Երևան

Այսքանով կավարտվի մեր ճանապարհորդությունը և կմեկնենք դեպի հարազատ Երևան՝ լի անմոռանալի տպավորություններով:



ՓԱԹԵԹԻ ԱՐԺԵՔԸ ՄԵԿ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՈՒՄ Է 1.115.000 ₴

Փաթեթի արժեքը ներառում է

- ✓ Երկկողմանի ավիատոմս Երևանից
- ✓ Անհատական երկկողմանի փոխադրում օդանավակայան - հյուրանոց
- ✓ 10 գիշեր երկտեղանի հյուրանոցային սենյակներում նախաճաշով
- ✓ Ներքին թռիչքներ
- ✓ 3-օրյա 5* նավարկություն Հալոնգ Բեյում 3-անգամյա սնունդով
- ✓ Հայ ուղեկցորդի ծառայություններ
- ✓ Ռուսալեզու ուղեկցորդի ծառայություններ
- ✓ Մուտքի տոմսեր
- ✓ Վիզա
- ✓ Ապահովագրություն



Հետաքրքիր փաստեր

Վիետնամի մասին

- 2008թ. -ամերիկյան «The Forbes» հանդեսը հրատարակեց ամենալավ խոհանոց ունեցող երկրների ցուցակը. Վիետնամը 3-րդն էր:
- Վիետնամում ուտում են այն ամենն, ինչ շարժվում է՝ որդերից մինչև սողուններ:
- Աշխարհի ամենամեծ քարանձավը գտնվում է Դանանգ քաղաքից ոչ հեռու:
- Մայրաքաղաք Հանոյի անունը թանգմանաբար նշանակում է «Քաղաք գետերի միջեւ»:
- Աշխարհում բրնձի արտահանման ծավալներով Վիետնամը 2-րդն է:
- Վիետնամը եղել է Ֆրանսիայի գաղութներից մեկը: Անկախացել է 1954թ.: ԱՄՆ-ն Վիետնամի անկախությունը ընդունեց միայն 1995թ.:
- Վիետնամում Ամանորի տոնակատարության օրը կախված է լուսնային «Տետ» օրացույցից:
- Վիետնամում կարգապահությունը հսկող ոստիկանները շատ ուշադիր են ու զգոն, նույնիսկ բարձրաձայն խոսելը կարող է գրավել նրանց ուշադրությունը:
- Վիետնամում մեքենաները քիչ են ու երթևեկության կանոններին գրեթե ոչ ոք չի հետևում: Բնակիչները հիմնականում երթևեկում են հեծանիվներով կամ մոպեդներով:
- Վիետնամում ընդունված չէ ձեռքերով խոսելն ու առհասարակ ակտիվ ժեստիկուլացիան:





Բաց մի թողեք այս ամենը սեփական աչքերով տեսնելու բացառիկ
հնարավորությունը:
Հեքիաթային Վիետնամը սպասում է ձեզ:

Բաղրամյան 1 | amenoor@spinnaker.am | +37491323264



amenoor
adventures and expeditions with spinnaker group